

ԽՄԹՁԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱՇԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՌՈԲԵԼՅԱՆԸ

Բոլորեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 50-ամյակը: Այդ իինք դասնամյակներից ավելի քան երեքն անցել են Հայոց Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հարկից ներս:

1970 և 80-ական թթ. առաջին կեսին Հայաստանում Եկեղեցական կյանքը շարունակվեց այն ընթացքով, որն ասփիճանաբար ծևավորվել էր Վազգեն Ա-ի ընդուժանը հաջորդած դարիներից, երբ Եկեղեցուն պարփառվել էր ծիսա-արարողական գործունեությամբ խսդորեն սահմանափակված մի շրջանակ: Նրանում իսկ, սակայն, Վազգեն Վեհափառն իր իմաստուն քաղաքականությամբ կարողացավ Ս. Էջմիածնին հայ ժողովրդի հոգևոր կենտրոնին վայել բարձրության վրա պահել, որում Հայոց Հայրապետական Աթոռը խորհրդանշում էր մեր ազգային-հոգևոր ինքնությունը:

Ս. Էջմիածնինը, սակայն, որպես ընդհանրական կենտրոն որքան Խորհրդային Հայստանի ժողովրդին էր, նույնան՝ հայմայն հայությանը:

Այս պայմաններում Երևանը ոչ միայն որպես հայրապետական թեմի առաջնորդանիստ, այլև իր մեկ միջոնից ավելի բնակչությամբ և շրջանների հետ սերդ կապվածությամբ դարձել էր նաև հանրապետության ամենօրյա Եկեղեցական կյանքի կենտրոնը, ուստի առանձնակիորեն էր կարևորվում Արարավյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի գերը:

Ուղիղ քանի դարի առաջ Արարավյան Հայրապետական թեմում Եկեղեցական ծառայության է անցնում մեր այսօրվա Հայրապետը՝ իր Եկեղեցական նվիրյալ ու եռանդուն գործունեության շնորհիվ կարճ ժամանակում արժանանալով Վազգեն Վեհափառի ամենաբարձր գնահատությանը և վստահությանը, ի նշան որի երկու դարի անց երիտասարդ վարդապետը Հայրապետի կողմից նախ նշանակվում է առաջնորդական փոխանորդ, ապա ճեղնադրվում եալիսկոպոս: Առաջնորդական նշանակման մասին Հայրապետական կոնդակում ասվում է, որ այն դրվել է «ի գնահատումն Զեր աւելի քան երկու դարիների անձնութեր ծառայութեանց նոյն թեմում, վստահ լինելով, որ Զեր նոր պաշտօնում պիտի շարունակեք Զեր Եկեղեցաշէն գործունեութիւնը. Զեր անձր ընորոշող հոգևոր եռանդով եւ պարասիանափութեան գիրակցութեամբ» («Էջմիածն», 1983, Բ-Գ, լ. 3):

Վստահաբար կարող ենք ասել, որ այն գործունեությունը, որը Վազգեն Վեհափառ ծավալել էր Մայր Աթոռում, նույնը Գարեգին Սրբազնը ծավալեց Երևանում և այն ժամանակ Արարավյան թեմն ընդգրկող հանրապետութեան գիրակցութեամբ» («Էջմիածն», 1983, Բ-Գ, լ. 3):

և վերստին Վազգեն Առաջինի ընդհանրացված բնորոշմամբ՝ «նա Արարապյան թեմի իրքն առաջնորդ իր հոգածությունը փարածում է նաև այլ նկեղեցիների վրա, և ես ուզում եմ այս առիթը օգտագործել զինքը շնորհավորելու և զեահափելու իր աշխարհանքը. և մաղթելու իրեն քաջառողջություն և անսպաս եռանդ և նորանոր ներշրջաններ, որպեսզի ծառայի մեր Մուրք Եկեղեցուն. մեր հավաքացյալ ժողովրդին, մեր Մայր Հայութնիքին» («Էջմիածին», 1987 թ., Ձ-Ծ, էջ 10):

Մեր ժողովրդի համար ծանրին և փոթորկութ 1990-ական թթ. այս զործունությունն մարմնավորվելու էր Վազգենյան Հոգևոր Դպրանցով, Կասնյակ և կեղեցիների վերանորոգությամբ, նորերի կատուցմամբ ու հիմնարկերով. մի շարք հոգևոր-քարեսիրական և կրթամշակութային ծրագրերով, այդ թվում և քարեզմութական ճաշարանների, Հայորդյաց դպների, Մանրանկարչության դպրոցի և համանման հասպատությունների հիմնմամբ, որուց նպատակն էր հասրավորինս մեղմել ժողովրդի վիճակը և Եկեղեցին կենդանի ներկայություն դարձնել հայաստանյան կյանքու:

Նույն այս նպատակով Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը դեռևս Արարապյան թեմում հիմքը դրեց գեղեցիկ մի ավանդույթի՝ թեմական շրջանակում ապրիլի 23-ը հոչակելով նահապակ հայ հոգևորականաց եխափակի ոգեկոչման, Ս. Սարգսի գոյնը՝ Երիփասարդության, իսկ Տյառնընդառաջը՝ նորապատակների օրինության օր: Նույն կերպ մայիսին շրջանավարդների օրինության օր հայփարարվեց ոստիմնական փարեկերջի օրը:

Այս արարողություններից վերջին երեսն այսօր ունեն արդեն ընդհանուր հայաստանյան ընդգրկում, Երիփասարդությանը Ս. Սարգսի գոյնի և Տյառնընդառաջի անմոռաց հուշերով կապելով իրենց Մայր Եկեղեցուն, իսկ շրջանավարդների՝ դեպ հասունություն փանող ճանապարհ խորհրդանշական կերպով սկսելով Եկեղեցի այցելությամբ և այսեւել սրբացած օրինությամբ:

Ազգային-Եկեղեցական սրբագումար ժողովում ընդունվելով Հայոց Հայրապետ, Նորին Սիրությունն արդեն համահայկական ընդգրկմամբ ու հնչեղությամբ է շարունակում Եկեղեցաշնեն այս գործունեությունը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրության կողմից մեր քարենմաթանքները միացնելով Գարեգին Երկրորդի ծննդյան 50-ամյակի առիթով այս օրերին սպացվող շնորհավորական քազմահարյուր հեռագրերին, որդիական խոնարհությամբ Նորին Սրբությանը կցանկանայինք 1700-ամյակի խորհրդով և լուսաշավիդ ընթացքով հայրապետական արդյունաշաբաթ արարությների նորանոր փասխամյակներ՝ ի փառս հայ ժողովրդի և Հայստանի Հայրապետության. Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու և նրա հոգևոր կենտրոն Մայր Առող Սուրբ Էջմիածինի: